ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«ՇՏԱՊԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

№ 01

«08» 01 2018 թ.

Ք.Երևան, Ձորափի 40
Հեռ.՝ 53-66-12, ֆաքս՝ 53-92-53

Հայաստանի Հանրապետության
գնումների բողոքարկման խորհրդի անդամ
Միեր Անանյանին

Հարգելի պարոն Անանյան

Հաշվի առնելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/49 որոշումը, «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի կարիքների համար գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի «ՇԲՕ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով հայտարարված գնման գործընթացի վերաբերյալ, գնահատող հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ ՀՀ «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն:

Քանի որ հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում նշված մատակարարման ժամկետը, այն է 5 աշխատանքային օր, փոփոխել և նախատեսել այլ ողջամիտ ժամկետ, օրինակ առնվազն 20 օրից մինչև 1 ամիս, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից, ինչպես նաև հայտերի բացման նիստի օրվանից մինչև պայմանագրի կնքումը ընկած ժամանակահատվածին ավելացնել նաև ապրանքի մատակարարման համար նախատեսված ժամկետը, Ընկերությունը **ձմեռային անվադողերը** ձեռք կբերի 2018 թվականի **մարտ ամսին**, ինչը համարվում է օբյեկտիվորեն չհիմնավորված և ոչ համարժեք այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Տնօրեն՝ Թ.Ստեփանյան